

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

\_\_\_\_\_ի 2018 թվականի N \_\_\_\_\_-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1391-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշման՝

1) վերնագրում, 1-ին կետի 4-րդ ենթակետում և N 4 հավելվածի «Անվանացանկ» և «Նկարագրեր» բաժինների վերնագրերում համապատասխանաբար «ընդհանուր» բառը փոխարինել «հիմնական» բառով,

2) N 4 հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկում՝

ա. «Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժ (ընդհանուր և մասնագիտացված ծրագրեր իրականացնող դպրոցներում՝ ուսուցչի օգնական)» տողից հանել «(ընդհանուր և մասնագիտացված ծրագրեր իրականացնող դպրոցներում՝ ուսուցչի օգնական)» բառերը,

բ. Լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնական»,

3) «II. Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրեն» բաժինն ուժը կորցրած ճանաչել,

4) «III. Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ» բաժնի 1-ին կետում՝

ա. 1-ին ենթակետի «մակարդակի» բառից հետո լրացնել «և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության» բառերը,

բ. լրացնել նոր՝ 5.1, 5.2 և 5.3 ենթակետեր՝

«5.1) ուսումնական հաստատության տնօրենի հետ միասին պատասխանատու է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար.

5.2) պատասխանատու է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման և անհատական ուսացման պլանի (այսուհետ՝ ԱՌԽՊ) մշակման, իրականացման և գնահատման համար.

5.3) պահպանում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր սովորողի համար կազմված անհատական գործը,»:

5) «IV. Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ» բաժնի 1-ին կետը լրացնել նոր՝ 3.1 և 3.2 ենթակետերով՝

«3.1) մասնակցում է ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սովորողների աջակցության ծառայությունների տրամադրման և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործընթացի կազմակերպման հարցերում».

3.2) աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում.».

6) «VI. Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետում «մանկապատանեկան կոլեկտիվի» բառերը փոխարինել «սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների» բառերով,

7) «VII. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը» բաժնի 1-ին կետում.

ա. լրացնել նոր 2.1 և 2.2 ենթակետեր՝

«2.1) իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՌԽՊ-ի կազմումը և վարումը.

2.2) ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՌԽՊ-ի.»:

բ. 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3) իրականացնում է սովորողների դիտարկում, առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում, մասնակցում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանը:».

գ. լրացնել նոր՝ 9.1, 10.1 , 10.2 ենթակետեր՝

**«9.1) մասնակցում է անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի մասնակցության պահանջ.**

10.1) համագործակցում է ուսուցչի օգնականի հետ՝ սովորողների ուսուցման արդյունավետ մեթոդների ու տեխնոլոգիաների ընտրության, ուսուցման կազմակերպման խմբային և անհատականացված մոտեցումների պլանավորման, ուսումնական նյութերի մշակման աշխատանքներում.

10.2) իրականացնում է սովորողի, (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) կրթության որակի ապահովմանն ուղղված այլընտրանքային ծրագրային,

մեթոդամանկավարժական աշխատանքներ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարողությունները առանձնահատկությունները ու հետաքրքրությունները.».

դ. «VII. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. 1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի կրթական աստիճանով) կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:»,

8) «VIII. Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը» բաժնի՝ ա. վերնագրում «օլիգոֆրենամանկավարժ» բառից հետո լրացնել «, էրգոթերապիստ» բառը. բ. 1-ին կետի 2-րդ ենթակետում «կրթական» բառը փոխարինել «կրթության առանձնահատուկ պայմանների» բառերով:

գ. 1-ին կետի 3-րդ ենթակետում «կրթական կարիքներին համապատասխան ուսուցման մեթոդներ, ձևեր և հնարքներ առաջարկում» բառերը փոխարինել «յուրաքանչյուր սովորողի համար առաջարկում կրթական առաջընթացին նպաստող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ».

դ. 1-ին կետի 5-րդ ենթակետում «հետազոտման» բառից առաջ լրացնել «ուսուցչի(ների) հետ միասին՝ սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման առանձնահատկությունների» բառերով,

ե. 1-ին կետի 6-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

զ. 1-ին կետի 8-րդ ենթակետում «հետ» բառից հետո լրացնել «տեխնիկական միջոցներով,» բառերը,

9) «IX. Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբան» բաժնի 1-ին կետում լրացնել նոր՝ 4.1, 5.1 և 14.1 ենթակետեր՝

«4.1) մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը՝ ապահովելով մասնագիտական շարունակական խորհրդատվություն.»,

«5.1) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված հոգեբանական խնդիրները.»,

**«14.1) մասնակցում է անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է հոգեբանի մասնակցության պահանջ.»,**

10) «X. Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժ» բաժնի 1-ին կետում լրացնել նոր՝ 4.1, 4.2, 4.3 և 4.4 ենթակետեր.

«4.1) մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը»,

4.2) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների մոտ նկատված սոցիալ-մանկավարժական խնդիրները.

4.3) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև աջակցության խմբի աշխատանքներին.

**4.4) մասնակցում է անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի մասնակցության պահանջ:»,**

11) «XI. Հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչը (զինղեկ)» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ միջին» բառերը,

12) «XII. Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարը» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետում «համապատասխան որակավորմամբ» բառերից հետո լրացնել «կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ» բառերը,

13) լրացնել նոր՝ «XIV. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնական» բաժին.

**«XIV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ**

**1. Պաշտոնային պարտականությունները՝**

1) օգնում է ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում,

2) աջակցում է ԱՌԻՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ.

3) աջակցում է ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար՝ ԱՌԻՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ,

4) ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ,

5) օժանդակում է ուսուցիչներին բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում,

6) մասնակցում է ուսուցչի կողմից դասերի պլանավորման աշխատանքներին.

7) ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում է երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խցընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները,

8) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը,

9) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,

10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,

11) մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին,

12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

13) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև աջակցության խմբի աշխատանքներին,

**14) մասնակցում է անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի մասնակցության պահանջ:**

2. Ուսուցչի օգնականի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. առարկայական չափորոշիչները, ծրագրերը և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ իրավական ակտերը,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, մինչբժշկական օգնության հիմունքները,

2) աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման պահանջները՝

1) Ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն, կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2) Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը կարող է զբաղեցնել սույն պաշտոնի որակավորման պահանջները բավարարող և տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոնում չաշխատող անձը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1391-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### Անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-200-Ն օրենքի ընդունմամբ:

#### Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) 17.1 հոդվածը սահմանում է Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել լրացումներ և փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկում և նկարագրերում:

Որոշման նախագծում տրված է «ուսուցչի օգնականի» պաշտոնի նկարագիրը: Պաշտոնի նկարագիրը մշակվել է եվրոպական, մասնավորապես սկանդինավյան երկրների, Կանադայի և ԱՄՆ-ի փորձի ուսումնասիրության հիման վրա: Ուսուցչի օգնականի հաստիքը ներդրվել է ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշման համաձայն:

Համաձայն «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) 17.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից:

Ուսուցչի օգնականը դասարանում իրականացնում է բոլոր սովորողների ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ, ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում և վեր է հանում՝ երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները՝ իրականացնելով դպրոցական մակարդակի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն:

ՀՀ կառավարության 1999 թվականի օգոստոսի 25-ի N 532 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում, նախնական

(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախագորակոչային պատրաստության» կարգի պահանջներին համապատասխանեցնելու համար որոշման նախագծում հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկ) պաշտոնի նկարագրից հանվել է «միջին մասնագիտական կրթություն» որակավորման պահանջը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն «Բացառիկ դեպքերում որպես վկա կարող է կանչվել տասնվեց տարեկան չհարձած երեխան, որին բացատրվում է դատարանին ցուցմունք տալու և միայն ճշմարտությունը հայտնելու կարևորությունը: Նա չի նախագգուշացվում սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին: Տասնվեց տարեկան չհարձած երեխայի հարցաքննության ընթացքում դատարանը հետևում է, որ հարցաքննության մեթոդը կամ հարցերը չշփոթեցնեն երեխային կամ չենթարկեն նրան անհարկի հոգեբանական ճնշման, և այդ նպատակով կարող է ցանկացած հարց հանել, ընդմիջել կամ դադարեցնել երեխայի հարցաքննությունը: Տասնվեց տարեկան չհարձած երեխայի հարցաքննությանը դատարանի նախաձեռնությամբ կարող է մասնակցել մանկական հոգեբանը կամ երեխայի մանկավարժը»: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածում սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է»: Հիմք ընդունելով վերը նշված դրույթը՝ նախագծում, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչի, ուսուցչի օգնականի, հոգեբանի և սոցիալական մանկավարժի պաշտոնների նկարագրերում նախատեսվել են դրույթներ՝ համաձայն որոնց նշված մանկավարժական աշխատողները մասնակցում են անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի կամ հոգեբանի մասնակցության պահանջ:

### **Ակնկալվող արդյունքը**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ նշված իրավական ակտով սահմանված դրույթները կհամապատասխանեցվեն «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և կներդրվի «ուսուցչի օգնականի» հաստիք:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:



**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1391-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
 ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ  
 ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
2.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
3.	Երևանի քաղաքապետարան	<p>1. Նախագծում բացակայում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողի պաշտոնը, վորջինիս նկարագիրն ու ներկայացվող պահանջները:</p> <p>2. Նախագծում առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներով պայմանավորված հոգեբանի, հատուկ և սոցիալական մանկավարժի ներկայումս գործող պաշտոնները, որոնցով պայմանավորված ծախսերի ֆինանսավորման սկզբունքները տեսանելի չեն ինչպես որոշմամբ սահմանված լրացուցիչ ֆինանսավորման բանաձևում, այնպես էլ վերջինիս ամբողջական ներդրմամբ ուսումնական հաստատությունների ընդհանուր ֆինանսավորման մեխանիզմների համատեքստում:</p>	<p>1. Չի ընդունվում</p> <p>2. Չի ընդունվում</p>	<p>1. Առանձին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողի պաշտոն չի նախատեսվում: Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցողներն են՝ ուսուցչի օգնականը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, հատուկ մանկավարժը որոնց պաշտոնների նկարագիրը սահմանված է ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ:</p> <p>2. ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշումը ֆինանսավորման մեխանիզմներ չի կարգավորում:</p>

<p>4.</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>1. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը «խնդրահարույց» բառից հետո լրացնել «խնդրահարույց» բառով, քանի որ տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին) եռօրյա ժամկետում տեղեկացնելու պահանջ ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով սահմանված է միայն խնդրահարույց դեպքերի համար,</p> <p>2. Նախագծով նախատեսել դրույթ, համաձայն որի ուսումնական հաստատության ներկայացուցիչը, սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, կմասնակցի նաև համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական խմբի աշխատանքներին (հիմք՝ ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման հավելվածի 18-րդ, 19-րդ կետեր),</p> <p>3. Նախագծի 1-ին կետի 7-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.2-րդ ենթակետով. «5.2) ուսուցչի օգնականների հետ համատեղ նախանշում և իրականացնում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված հոգեբանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ.»,</p> <p>4. Նախագծի 1-ին կետի 8-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.3-րդ ենթակետով. «4.3) ուսուցչի օգնականների հետ համատեղ նախանշում և իրականացնում է երեխաների մոտ նկատված սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ.»,</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. 2ի ընդունվել</p> <p>4. 2ի ընդունվել</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն՝ նախագծի 1-ի կետի 9-րդ և 12-րդ ենթակետերում:</p> <p>3. Քանի որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման «Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը» բաժնի 1-ին կետի 9-րդ ենթակետում ամփոփված է նշված գործառույթը:</p> <p>4. Քանի որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման «Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը» բաժնի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում ամփոփված է նշված գործառույթը:</p>
-----------	---	--	---	---

5.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսվում է հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնեական պարտականությունները սահմանող 1-ին կետի 13-րդ ենթակետը լրացնել <b>կյանքի դժվարին իրավիճակում</b> հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման խնդրահարույց դեպքում եռօրյա ժամկետում տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) տեղեկացնելու (ծանուցելու) պարտականությամբ: Գտնում ենք, որ նշված դրույթում օգտագործվող «կյանքի դժվարին իրավիճակ» ձևակերպումն անորոշություն է առաջացնում, ինչը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1044-Ն որոշման հավելվածի 5-րդ կետում հստակ թվարկված են այն խնդրահարույց դեպքերը, որոնք տվյալ որոշման իմաստով համարվում են կյանքի դժվարին իրավիճակներ, ուստի գտնում ենք, որ Նախագծի նշված դրույթում անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ կառավարության <i>նշված որոշմամբ</i> սահմանված խնդրահարույց դեպքերին:</p>	1. Ընդունվել է	1. Կատարվել է համապատասխան փոփոխություն
----	--	---	----------------	---

	<p>2. Նախագծով Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը լրացվում է ուսուցչի օգնականի պաշտոնով և սահմանվում է վերջինիս նկարագիրը:</p> <p>Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ ուսուցչի օգնականի պաշտոնի նկարագիրը մշակվել է եվրոպական, մասնավորապես՝ սկանդինավյան երկրների, Կանադայի և ԱՄՆ-ի փորձի ուսումնասիրության հիման վրա: Ուսուցչի օգնականի պաշտոնը ներդրվել է ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի թիվ 46-Ն որոշմամբ:</p> <p>Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության հիշատակված որոշումը վերաբերում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում <b>կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության</b> կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգի հաստատմանը: Բացի այդ, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցների հետ աշխատանքային քննարկման ընթացքում ևս պարզաբանվել է, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված ներառական կրթության քաղաքականությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում ուսուցչի օգնականի պաշտոնը նախատեսվում է ներդնել <b>կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակով</b>: Մինչդեռ թե՛ ուսուցչի օգնականի՝ Նախագծով նախատեսված պաշտոնային պարտականությունների վերլուծությունից, թե՛ Նախագծին կից ներկայացված հիմնավորումից պարզ չէ, որ ուսուցչի օգնականի պաշտոնի ներդնումն ուղղված է ոչ թե հանրակրթական դպրոցներում սովորող բոլոր, այլ հատուկ կատեգորիայի երեխաների կրթության կազմակերպմանը:</p>	<p>2. Ընդունվել է</p>	<p>2. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	-----------------------	--

		<p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել՝ այն համապատասխանեցնելով ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշման հավելվածի պահանջներին:</p> <p>3. Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում «4-րդ կետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին կետի 4-րդ ենթակետում բառերով»:</p> <p>4. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները՝ Նախագծի 1-ին կետի ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է խմբագրել, իսկ 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունում «13-րդ կետում բառերը՝ փոխարինել «1-ին կետի 13-րդ ենթակետում» բառերով:</p>	<p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p>	<p>3. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>4. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	--	--	---	---

<p>6.</p>	<p>Երևանի քաղաքապետարան 2017-09-27 թիվ 01/7-58907Հ</p>	<p>ՀՀ կառավարության 16.02.2017թ. N 141-Ն որոշման և ՀՀ կառավարության 14.10.2010թ. N 1391-Ն որոշման տարընթերցումներից խուսափելու նպատակով Նախագծում տալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող աշխատողների սահմանումը:</p>	<p>Քանի որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրամանի հավելվածով հաստատված «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի» 4-րդ կետի համաձայն՝ դպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրվում են հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի միջոցով, նույն հրամանի 7-րդ կետի համաձայն՝ <u>աջակցության խմբի կազմում ընդգրկվում են հաստատության ուսուցչի օգնականը(ները), հատուկ մանկավարժը(ները), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը: Եթե հաստատությունում չկան նշված մասնագետները, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային կենտրոնից:</u></p>
-----------	--	--	---

				<p>Դպրոցական մակարդակում աջակցության խումբը, սերտ համագործակցելով ուսուցիչների և սովորողի ծնողների հետ, իրականացնում է դպրոցական մակարդակում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն ու կրթության արդյունավետ կազմակերպումը, <u>իսկ ՀՀ կառավարության 14.10.2010թ. N 1391-Ն որոշմանմբ սահմանված են ուսուցչի օգնականի, հատուկ մանկավարժի, հոգեբանի և սոցիալական մանկավարժի պաշտոնների նկարագրերը:</u></p>
7.	<p>Ֆինանսների նախարարություն 2017-09-13 թիվ 01/9-2/16601-17</p>	<p>Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժի և հոգեբանի գծով նկարագրերում նախատեսել դրույթ՝ քրեական վարույթ իրականացնող մարմնում տասնվեց տարին չլրացած անչափահասների մասնակցությամբ հարցաքննության, առերեսման, անձին և առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողություններին, դատական նիստերի դահլիճում անչափահասների հարցաքննությանը մանկավարժի և հոգեբանի մասնակցության վերաբերյալ</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 1-ին կետի 7-րդ, 9-րդ, 10-րդ և 13-րդ ենթակետերում կատարվել են համապատասխան լրացումներ:</p>

<p>8.</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարության եզրակացությունը</p>	<p>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է <b>մանկավարժի</b> մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: Նշված կարգավորումից բխում է, որ քրեական վարույթ իրականացնող մարմնում տասնվեց տարին չլրացած անչափահասների մասնակցությամբ հարցաքննության, առերեսման, անձին և առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողություններին, դատական նիստերի դահլիճում անչափահասների հարցաքննությանը հոգեբանի մասնակցության վերաբերյալ դրույթներ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի սահմանում:</p> <p>Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը համակարգային ձևով անդրադարձ չի կատարում անչափահաս տուժողների մասնակցությամբ քննչական, ինչպես նաև դատավարական այլ գործողությունների կատարման կարգին, չի սահմանում դրանց կատարման առանձնահատկությունները, ինչպես նաև զրեթե բացակայում են անչափահաս տուժողների իրավունքների իրականացման այնպիսի լրացուցիչ երաշխիքներ, որոնք միտում կունենան բացառելու կամ գոնե նվազեցնելու դատավարական գործողությունների արդյունքում անչափահաս վկաներին կամ տուժողներին հասցվող ցանկացած բացասական ազդեցություն: Իսկ գործող դատավարական այլ օրենսգրքերից միայն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով է սահմանված, որ բացառիկ դեպքերում որպես վկա կարող է կանչվել տասնվեց տարեկան չդարձած երեխան և նրա հարցաքննությանը դատարանի նախաձեռնությամբ <b>կարող է մասնակցել մանկական հոգեբանը կամ երեխայի մանկավարժը:</b></p>	<p>Ընունվել է.</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>Ուսուցչի, սոցիալական մանկավարժի, օգնականի, հոգեբանի պաշտոնի անձնագրերում նախատեսվել են օրենքով սահմանված դեպքերում անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցության վերաբերյալ դրույթներ:</p>
-----------	---	---	--------------------	---



		<p>Տեղեկացնում ենք, որ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում է հիշյալ հարցերին առնչվող «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որով նախատեսվում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրանք: Նախագծով նոր խմբագրությամբ շարադրվող հիշյալ հոդվածի 4-րդ մասի կարգավորումների համաձայն՝ տասնվեց տարին չլրացած անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը <b>մանկավարժի մասնակցությունը պարտադիր է՝</b> բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի, որով թվարկվում է, թե որ դեպքերում է անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը մանկավարժի փոխարեն պարտադիր լինելու համապատասխան որակավորում և մասնագիտական փորձ ունեցող <b>հոգեբանի մասնակցությունը:</b> Դրանք են՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.</li> <li>2) անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու դեպքում.</li> <li>3) անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հոգեկան խանգարում ունենալու դեպքում.</li> <li>4) եթե հոգեբանի մասնակցությունը բխում է անչափահասի լավագույն շահերից:</li> </ol> <p>Նախագիծը մշակվում է հաշվի առնելով անչափահասների պաշտպանության վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերում ներկայացվող պահանջները, որոնք վերաբերում են ոչ միայն անչափահաս կասկածյալներին և մեղադրյալներին, այլև անչափահաս տուժողներին և վկաներին: Մշակվող նախագծով անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչին, մանկավարժին կամ հոգեբանին իրավունք է վերապահվելու մինչդատական վարույթում քննիչի թույլտվությամբ հարցեր ուղղելու անչափահասին, իսկ դատական քննության փուլում հոգեբանը մասնակցելու է նաև անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ կատարվող հարցաքննությանը:</p>	
--	--	--	--

	<p>Միաժամանակ, դատական քննության փուլում հոգեբանը նախագահողի թույլտվությամբ կարողանալու է առարկություններ և դիտողություններ ներկայացնել հարցաքննության բնականոն ընթացքի վերաբերյալ: Նախագծով նաև առաջարկվում է մանկավարժ սուբյեկտին առանձին դեպքերում փոխարինել հոգեբանով, քանի որ անչափահասին հոգեբանական աջակցություն ցուցաբերելն անհրաժեշտ է վերապահել այդ ոլորտում որոշակի գիտելիքներ ու փորձ ունեցող մասնագետներին, ովքեր ավելի ճիշտ և բազմակողմանի կարող են գնահատել անչափահասի հատուկ պահանջներն ու հոգեբանական առանձնահատկությունները:</p> <p><b>Հիշյալ նախագծով նախատեսվող փոփոխությունները այն քայլերն են, որոնք ուղղված են լինելու անչափահասի մասնակցությամբ դատավարական գործողությանը անչափահասի շահերին չվնասելու սկզբունքի համար լրացուցիչ երաշխիք սահմանելուն, <b>հետևաբար անչափահասների հարցաքննության ժամանակ հոգեբանի պարտադիր մասնակցության ապահովումը նախագծի ընդունումից հետո նույնպես առաջնահերթ լուծում պահանջող հարց է դիտարկվելու:</b></b></p> <p>Այդ առնչությամբ մենք ընդունելի ենք համարում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունը և գտնում ենք, որ ներկայացված առաջարկության ընդունմամբ իր պրակտիկ և տրամաբանական լուծումը կստանա նաև Նախագծի ընդունումից հետո դիտարկվելիք հարցը: Ուստի, մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը հիշյալ նախագիծը ներկայացնելը, անհրաժեշտ է այն լրամշակել ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությունների լույսի ներքո:</p> <p>Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Նախագծի մշակման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարությունում շահագրգիռ մարմինների հետ համատեղ տեղի է ունեցել քննարկում, որի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը կարծիք է հայտնել, որ անչափահասների հարցաքննության ժամանակ հոգեբանի մասնակցության հարցը կարող է լուծվել մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում աշխատող հոգեբանների միջոցով՝ հաշվի առնելով, որ ոչ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները ներկայումս ունեն հատուկ մանկավարժ կամ հոգեբան:</p>	
--	---	--

		Հետևաբար, ՀՀ արդարադատության նախարարությունը նույնպես համակարծիք է ներկայացված առաջարկության հետ:		
--	--	---	--	--

<p>9.</p>	<p>«Նախագահի աշխատակազմ»</p> <p>Նախագծով առաջարկվում է հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի, սոցիալական մանկավարժի և ուսուցչի օգնականի պաշտոնային պարտականությունների թվում նախատեսել նաև մասնակցությունը քրեական վարույթ իրականացնող մարմնում տասնվեց տարին չլրացած <i>անչափահասների</i> մասնակցությամբ հարցաքննության, <i>առերեսման, անձին և առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողություններին</i> և <i>դատական նիստերի դահլիճում անչափահասների հարցաքննությանը</i>:</p> <p>Այս կապակցությամբ ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Քրեական դատավարության օրենսգրքով մանկավարժի ներկայության հնարավորություն նախատեսված է <i>միայն</i> քրեական գործով <i>մինչդատական վարույթի</i> փուլում և այն էլ <i>միայն</i> անչափահաս <i>վկայի</i> կամ <i>տուժողի հարցաքննության</i> ժամանակ:</p> <p>Այսպես՝ «Քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված է, որ <i>մինչև փաստվեց փարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ</i>: Մինչդեռ <i>առերեսման, անձին և առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողությունների</i> հետ կապված հարաբերությունները կանոնավորող դրույթներում, ինչպես նաև նույն օրենսգրքի՝ «Դատաքննություն» վերտառությամբ 43-րդ գլխում դատական քննության ընթացքում անչափահասների հարցաքննությանը մանկավարժի մասնակցությունը թույլատրող որևէ օրինադրույթ առկա չէ:</p> <p>Վերոգրյալից հետևում է, որ նախագծով, ըստ էության, շրջանցելով օրենքը, մինչդատական վարույթում անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությունից զատ՝ մանկավարժի ներկայությունը երաշխավորվում է <i>բոլոր անչափահասների համար</i>, ինչպես մինչդատական վարույթում և դատական քննության փուլում հարցաքննությանը, այնպես էլ <i>առերեսման, անձին և առարկաները ճանաչման ներկայացնելու քննչական գործողություններին</i>:</p> <p>Հարկ է նշել, որ «Քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասից հետևում է, որ <i>քրեական գործերով վարույթի կարգը</i> պետք է սահմանվի բացառապես օրենքներով, այդ թվում և հատկապես՝ «Քրեական դատավարության օրենսգրքով:</p> <p>Իսկ անչափահասների մասնակցությամբ դատավարական գործողություններին մանկավարժի ներգրավումը քրեական գործերով վարույթի կարգի բաղկացուցիչ մասն է:</p>	<p>Ընունվել է.</p>	<p>Համադրելով «Քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասից հետևում է, որ <i>քրեական գործերով վարույթի կարգը</i> պետք է սահմանվի բացառապես օրենքներով, այդ թվում և հատկապես՝ «Քրեական դատավարության օրենսգրքով:</p> <p>Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի, ուսուցչի օգնականի, հոգեբանի և սոցիալական մանկավարժի պաշտոնների նկատմամբ նախատեսվել են դրույթներ՝ համաձայն որոնց նշված մանկավարժական աշխատողները մասնակցում են անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, <b>եթե օրենքով նախատեսված է մանկավարժի կամ հոգեբանի մասնակցության պահանջ</b>:</p>
-----------	---	--------------------	---

	<p>Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ նախատեսող օրինագծին, ապա անհրաժեշտ է շեշտել, որ քանի դեռ այդ նախագիծն օրենքի ուժ չի ստացել, սույն դրա առկայությունը որևէ կերպ չի լեգիտիմացնում օրենքի կարգավորման տիրույթում գտնվող դրույթների ներմուծումը ՀՀ կառավարության որոշման մեջ՝ թեկուզև հարցին գործնական և անգամ ժամանակավոր լուծում տալու նպատակով:</p>		
--	---	--	--